ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման արդյունքում ստացված առարկությունների և առաջարկությունների

Հ/Հ	Առարկության և (կամ) առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը	Առարկության և (կամ) առաջարկության ամփոփ բովանդակությունը	Առարկության և (կամ) առաջարկության վերաբերյալ համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը
	1	2	3	4
1.	Լևոն Բարսեղյան N 21225 2021-12-06	1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ առաջնորդվելով «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ յկետով առաջարկվում է բարձրացնել 2-2,5 անգամ:	Ընդունված է	Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տների և 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական շենքերի և շինությունների համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը փոփոխել նպատակահարմար չենք գտնում, քանի որ բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ չեն սպասվում: Առաջարկվում է 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը բարձրացնել 2 անգամ, 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը բարձրացնել 3 անգամ, 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը բարձրացնել 3 անգամ:

		9.Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ բարձրացնել 3 անգամ	Ընդունված չէ	Ճշգրտելով նշենք, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները հնարավոր է կիրառել միայն նույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի դեպքում: Հետևաբար, համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար, տեղական տուրքի դրույքաչափը կարող է սահմանվել 1.5 անգամ ավելի՝ ըստ նույն հոդվածի 3-րդ մասի: Հավելենք նաև, որ Երևանի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար, 2021 թվականին տեղական տուրքը սահմանվել է 50000 (հիսուն հազար) դրամ:
		11.Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 1 (մեկ) գլխի հաշվով՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 10.000 մանր եղջերավոր անասուններ՝ 6.000 խոզեր՝ 6.000	Ընդունված չէ	Հաշվի առնելով ընտանի կենդանիների հաշվառման հետ կապված բարդությունները՝ 2021 թվականին հնարավոր չի եղել հավաքագրել պլանավորված գումարը: Տուրքի չափի բարձրացումը կհանգեցնի ավելի բարդ խնդիրների, ուստի նպատակահարմար չէ տուրքի դրույքաչափի բարձրացումը:

		12.Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ գովազդատուների վճարած գումարի 75 տոկոսը:	Մասամբ ընդունված է	Ըստ <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դ) ենթակետի գովազդի տուրքը սահմանում ենք 1500 դրամ, չկիրառելով նախկինում կիրառված գործակիցը:
		13.Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար: Առաջարկվել է գրել համայնք	Ընդունված չէ	Առաջնորդվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով մերժում ենք Ձեր առաջարկը:
		18.Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝ կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ Դրույքաչափը դարձնել տարեկան 36.000 դրամ, ամսական 3.000 դրամ:	Ընդունված չէ	Ըստ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի ա) ենթակետի՝ համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝ կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար, օրացուցային տարվա համար, համայնքի վարչական տարածքում

				տեղական տուրքը կարող է սահմանվել տասը հազարից մինչև քսան հազար ՀՀ դրամ: Նույնիսկ սույն հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ տվյալ տուրքը չի կարող սահմանվել 36.000 ՀՀ դրամ: Կիրառելով սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված 1.5 գործակիցը՝ տուրքը նախատեսում ենք սահմանել 30.000 ՀՀ դրամ:
		25. 5)Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ Առաջարկված է 5- ի փոխարեն դարձնել 10 դրամ քմ դրույքաչափ:	Ընդունված է	2022 թվականի համար արտադրկան՝ արդյունաբերական գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղ)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ աղբահանության վճարը նախատեսվում է դարձնել 8 դրամ:
		28.Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական վճարը սահմանվում է. 1.1. մինչեւ 15 րոպեն անվճար, 16-60 րոպեն՝ 100 դրամ, 61 րոպեից մինչեւ 1 օրը՝ 300 դրամ, 1-7 օրը՝ 1500 դրամ, 8-31 օրը՝ 8000 դրամ, 32 եւ ավելի օրը՝ 70.000 դրամ:	Քննարկման ենթակա է	Տեղեկացնում ենք, որ <<Գյումրու քաղաքային ճանապարհներ ծրագրի>> շրջանակներում <<ՌՕՄ թրանսփորթեյշն էնջինիրինգ>> և << Գրանթ Թորնթոն Քնսալթինգ>> ընկերությունների կողմից կազմված Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղերի ռազմավարության և գործողությունների պլանը գտնվում է ավարտական փուլում, մասնավորապես, զբոսաշրջային ավտոբուսների կայանման կայանատեղերի ռազմավարության և գործողությունների նախագծի ուսումնասիրումից հետո կձեռնարկվեն համապատասխան քայլեր ծրագրի իրականացման համար:

		30. Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար: Առաջարկվում է դրույքաչափը սահմանել 0:	Ընդունված չէ	
		36. 1),2),3)Թանգարանների մշտական այցելությունների տոմսի գին: Առաջարկվել է դարձնել 1000 դրամ թանգարանների մշտական այցելությունների տոմսի գին դպրոցականների, ուսանողների և թոշակառուների համար՝ առաջարկվել է դարձնել 500 դրամ Թանգարանների մշտական այցելությունների տոմսի գին օտարերկրացիների համար՝ Առաջարկվել է վերացնել այս խտրականությունը: Մի կողմից բարդ է ամեն անգամ պարզել օտարերկրացի է թե՞. Ոչ, մյուս կողմից՝ երկքաղաքացին օտարերկրացի՞ է թե՞ ոչ, օտերաերկրացին կարող է ասել Հայաստանումէ ապրուլմ արդեն 6-10 ամիս, եւ այլն:	Քննարկման ենթակա է	Թանգարանների մուտքի համար սահմանված վճարների փոփոխության գործընթացը փուլային և շարունակական է: Որպես առաջին քայլ, առաջարկում ենք պահպանել առաջարկվող մուտքավճարները՝ գործող գնային սանդղակի համեմատությամբ կտրուկ տատանումներ չունենալու համար: Գործընթացի հաջորդ փուլերի ընթացքում կքննարկվի նաև ստացված նոր առաջարկը:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին»
նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման

Հ/Հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1.	«**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին**» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման մասին	ՏԵՂԵԿԱՆՔ **«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին»** նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման մասին
2.	Հանրությանը «**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին**» նախագծի վերաբերյալ իրազեկումը	Տեղադրվել է համայնքի պաշտոնական gyumricity.am համացանցային կայքում 2020 թվականի նոյեմբերի 25-ին՝ https://www.gyumricity.am/hy/information-center/announcements/1446-2021-11-25-15-12-11 հղմամբ և համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում, հայտարարություն է տրվել Շանթ և Ցայգ հեռուստատեսություններով, փակցվել է համայնքապետարանի հայտարարությունների ցուցատախտակին՝ նաև դրսից ընթերցելու հնարավորությամբ:
3.	Հանրային քննարկման մասնակիցները	Մասնակիցների ցուցակը կցվում է:
4.	Հանրային բաց լսման և քննարկման մասնակցության արդյունքները	Հանրային բաց լսման և քննարկման մասնակիցների կողմից հարցը միաձայն ընդունվել է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**